ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

Ն Ա Խ Ա Գ Ա Հ

ք. Երևան «24» հունիսի, 2016 թ.

Հ Ր Ա Մ Ա Ն 29-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՊԱՐԳԵՎՆԵՐԻ ՁԵՎԵՐԸ, ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԵՎ ՇՆՈՐՀՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 9-Ի N 27-Ա/Ք ՀՐԱՄԱՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հոկտեմբերի 18-ի «Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության համակարգում գործող գիտության պետական կոմիտեի կանոնադրությունը և աշխատակազմի կառուցվածքը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 12-ի N 1579-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» N 1269-Ն որոշմամբ հաստատված հավելված 1-ի 12-րդ կետի 1-ին և 4-րդ ենթակետերով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության կոմիտեի՝

1) պարգևների ներկայացման և շնորհման կարգը՝ համաձայն հավելված 1-ի,
2) ոսկե մեդալի տեսքը և բնութագիրը՝ համաձայն հավելված 2-ի,
3) ոսկե մեդալի վկայականի ձևը՝ համաձայն հավելված 3-ի,
4) պատվոգրի ձևը՝ համաձայն հավելված 4-ի,
5) շնորհակալագրի ձևը՝ համաձայն հավելված 5-ի:

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության կոմիտեի նախագահի 2010 թվականի սեպտեմբերի 9-ի N 27 -Ա/Ք հրամանը:

3. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության կոմիտեի գլխավոր քարտուղար Լ. Մարդոյանին:

Ս. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված 1

ՀՀ կրթության և գիտության նախարարության
գիտության կոմիտեի նախագահի
2016 թ. հունիսի 24-ի N 29-Ա հրամանի

ԿԱՐԳ
Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության կոմիտեի պարգևների ներկայացման և շնորհման

1. Սույնով սահմանվում է Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) պարգևների ներկայացման և շնորհման կարգը:

2. Կոմիտեի պարգևների շնորհման նպատակն է գնահատել և խրախուսել գիտական և գիտատեխնիկական գործունեության ոլորտում (այսուհետ՝ գիտության ոլորտ), գիտամանկավարժական կամ գիտակազմակերպչական գործունեության բնագավառում, գիտության ոլորտի զարգացման գործում նշանակալի ավանդ ունեցած կամ գիտության ոլորտում բարեգործական ակտիվ գործունեություն իրականացրած Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների քաղաքացիներին և կազմակերպություններին:

3. Կոմիտեի պարգևներն են՝ «Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության կոմիտեի ոսկե մեդալը» (այսուհետ՝ Ոսկե մեդալ), «Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության կոմիտեի պատվոգիրը» (այսուհետ՝ Պատվոգիր) և «Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության կոմիտեի շնորհակալագիրը» (այսուհետ՝ Շնորհակալագիր):

4. Ոսկե մեդալը շնորհվում է գիտական կազմակերպություններին, գիտության ոլորտի ականավոր գործիչներին, գիտության ոլորտում, գիտամանկավարժական կամ գիտակազմակերպչական գործունեության բնագավառում բացառիկ ներդրում ունեցած անձանց, բարերարներին՝

1) արդիական խնդիրների հետազոտություններում ձեռքբերումների, ակնառու նվաճումների, ունեցած մեծ ավանդի և արգասաբեր աշխատանքի համար,

2) նշանակալի գործունեության, գյուտերի և հայտնագործությունների համար,

3) միջազգային համագործակցության զարգացման գործընթացում ունեցած ավանդի և ներդրումների, օտարերկրյա պետությունների հետ համագործակցության զարգացմանը նպաստող գործունեության, գիտակրթական համագործակցության, բարեկամական

կապերի ամրապնդման և զարգացման գործում ունեցած նշանակալի ծառայությունների համար,

4) գիտական կադրերի պատրաստման համար:

5. Ոսկե մեդալի հետ հանձնվում է նաև համապատասխան վկայական: Ոսկե մեդալը Կոմիտեի բարձրագույն պարգևն է:

6. Պատվոգիր կամ Շնորհակալագիր շնորհվում է գիտության ոլորտի գործիչներին, գիտության ոլորտում, գիտամանկավարժական կամ գիտակազմակերպչական գործունեության բնագավառում ներդրում ունեցած անձանց, գիտական կազմակերպություններին, բարերարներին՝

1) գիտության ոլորտում ունեցած ձեռքբերումների համար,

2) գիտության ոլորտում երկարամյա անձնվեր և արդյունավետ աշխատանքի համար,

3) գիտության ոլորտի զարգացման գործում ունեցած հաջողությունների և զգալի ավանդի համար,

4) գիտական կարևոր միջոցառումների կազմակերպման և անցկացման համար,

5) գիտական և վարչարարական արդյունավետ գործունեության համար:

7. Կոմիտեի պարգևների համար թեկնածություններ կարող են առաջադրել՝

1) Հայաստանի Հանրապետությունում գիտական և գիտատեխնիկական գործունեության իրականացնող իրավաբանական անձինք՝ գիտական խորհրդի միջնորդությամբ,

2) պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները՝ տվյալ մասնագիտությամբ գիտական կազմակերպության գիտական խորհրդի միջնորդությամբ,

3) ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի նախագահությունը,

4) Կոմիտեի նախագահը,

8. Պարգևատրման ներկայացվող թեկնածուների վերաբերյալ Կոմիտեի աշխատակազմ ներկայացվում է միջնորդագիր՝ համաձայն Ձև 1-ի:

9. Միջնորդագրի հետ միաժամանակ Կոմիտեի աշխատակազմ է ներկայացվում՝

1) ֆիզիկական անձանց դեպքում թեկնածուի՝

ա. կենսագրական տվյալները՝ համաձայն Ձև 2-ի,

բ. անձնագրի պատճենը,

գ. բնութագիրը՝ ստորագրված այն տվողի կողմից,

դ. այլ անհրաժեշտ փաստաթղթեր:

2) իրավաբանական անձանց դեպքում՝

ա. գիտական խորհրդի միջնորդությունը,

բ. տեղեկություն ձեռքբերումների վերաբերյալ:

10. Պարգևատրման գործընթացի կազմակերպման համար պատասխանատու է Կոմիտեի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժինը (այսուհետ՝ Բաժին):

11. Պարգևատրման ներկայացվող թեկնածուների վերաբերյալ միջնորդագիրը ստանալուց հետո Բաժինը 5-օրյա ժամկետում ստուգում է դրանց համապատասխանությունը սույն կարգի պահանջներին: Որևէ փաստաթղթի պակաս կամ ոչ ճիշտ ներկայացված լինելու դեպքում Բաժինը այդ մասին տեղեկացնում է միջնորդագիր ներկայացնողին: Միջնորդագիր ներկայացնողը պարտավոր է հնարավորինս սեղմ ժամկետում լրացնել պակաս փաստաթուղթը: Միջնորդագիրը ներկայացվելուց հետո 10-օրյա ժամկետում Բաժինը պատրաստում է զեկուցագիր ներկայացված փաստաթղթերի ամբողջականության և սույն կարգի պահանջներին համապատասխանելու վերաբերյալ:

12. Կոմիտեի պարգևի տեսակի և պարգևատրման նպատակահարմարության վերաբերյալ որոշումն ընդունում է Կոմիտեի նախագահը: Կոմիտեի պարգևով պարգևատրման հարցը որոշվում է սույն կարգի 5-րդ և 6-րդ կետերի պահանջներին համապատասխան:

13. Կոմիտեի պարգև շնորհելու վերաբերյալ Կոմիտեի նախագահի ընդունած որոշման հիման վրա Բաժինը պատրաստում է համապատասխան հրամանի նախագիծը և պարգևատրման վկայականը:

14. Կոմիտեի պարգևները հանձնում է Կոմիտեի նախագահը կամ նրա հանձնարարությամբ՝ Կոմիտեի այլ պաշտոնատար անձ:

15. Կոմիտեի նույն պարգևով միևնույն անձը մեկից ավելի անգամ չի պարգևատրվում: Ոսկե մեդալով, Պատվոգրով և Շնորհակալագրով պարգևատրվելու համար հաջորդականության պարտադիր պահանջ չկա:

16. Պարգևատրված անձինք պարտավոր են խնամքով պահպանել Կոմիտեի կողմից շնորհված պարգևը:

17. Պարգևատրված անձի մահվան դեպքում պարգևը կարող է որպես հիշատակ պահվել նրա ժառանգների մոտ կամ վերջիններիս համաձայնությամբ՝ հանձնվել թանգարաններից մեկին:

18. Կոմիտեի պարգևների կորստի դեպքում տրվում է միայն համապատասխան հրամանի պատճենը:

Ձև 1

ՀՀ կրթության և գիտության նախարարության
գիտության կոմիտեի նախագահի
2016 թ. հունիսի 24-ի N 29-Ա հրամանի հավելված 1

ՄԻՋՆՈՐԴԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության կոմիտեի ----------ով պարգևատրելու նպատակով

(պարգևի անվանումը)

Ներկայացնում եմ ---------- -ի
թեկնածուի անունը, ազգանունը և հայրանունը/կազմակերպության անվանումը
թեկնածությունը ՀՀ ԿԳՆ գիտության կոմիտեի կողմից պարգևատրման համար:

Կից ներկայացնում եմ ՀՀ ԿԳՆ գիտության կոմիտեի նախագահի 2016 թվականի հունիսի 24-ի N 29-Ա հրամանով հաստատված կարգով պահանջվող փաստաթղթերը՝

1) ----------,
2) ----------,
3) ----------:

Առդիր՝ ---- թերթ:

---------- ----------
Լրացնողի անուն, ազգանունը, ստորագրությունը

«--------» ---------- 20 թ.

Կ.Տ.

Ձև 2

ՀՀ կրթության և գիտության նախարարության
գիտության կոմիտեի նախագահի
2016 թ. հունիսի 24-ի N 29-Ա հրամանի հավելված 1

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության կոմիտեի պարգևի ներկայացվող թեկնածուի մասին

1. Ազգանունը ----------

Անունը ---------- Հայրանունը ----------

2. Սեռը ----------

3. Ծննդյան ամսաթիվը----------
oo/aa/տտտտ

4. Ծննդյան վայրը ----------
(մարզ, քաղաք, գյուղ)

5. Քաղաքացիությունը ----------

6. Կրթությունը ----------

լուսանկարի տեղը

h/h	ուսումնական հաստատությունը	մասնագիտությունը
1.		
2.		
3.		

7. Գիտական աստիճանը ----------

8. Գիտական կոչումը ----------

9. Գիտական աշխատությունների, գյուտերի քանակը ----------

10. Ատենախոսության բնագավառը, մասնագիտությունը, մասնագիտական դասիչը

ա) թեկնածուական----------

բ) դոկտորական ----------

11. Գրախոսվող ամսագրերում վերջին 5 տարիների ընթացքում հրատարակած հոդվածների քանակը (նշել հեղինակ(ներ)ը, վերնագիրը, ամսագիրը, տարին, հատորը, էջերը՝ կցել ձևին)

h/h	հեղինակը /ները	վերնագիրը	ամսագիրը	տարին	հատորը	էջերը

12. Հինգ լավագույն աշխատությունների կամ հրապարակումների և նախագծերի ցանկը (վերնագիրը, ամսագիրը կամ հրատարակչությունը, տարին, հատորը, էջերը)

h/h	վերնագիրը	ամսագիրը կամ հրատարակչությունը	տարին	հատորը	էջերը

13. Աշխատանքային գործունեությունը

ամսաթիվը		կազմակերպության անվանումը	պաշտոնը
ընդունվելու	ազատվելու		

14. Այլ պարգևներ և մրցանակներ

h/h	պարգևի անվանումը	պարգևատրման ամսաթիվը

15. Հասցեն ----------

16. Հեռախոսահամարները ----------

17. էլեկտրոնային փոստը ----------

18.Անձնագրային տվյալներ ----------

(սերիա, համար, երբ և ում կողմից է տրվել)

---------- ----------

Թեկնածուի անուն, ազգանունը, ստորագրությունը

«-------» ---------- 20 թ.

Հավելված 2

ՀՀ կրթության և գիտության նախարարության
գիտության կոմիտեի նախագահի
2016 թ. հունիսի 24-ի N 29-Ա հրամանի

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության կոմիտեի ոսկե մեդալի տեսքը և բնութագիրը

Մեդալի երեսը

Մեդալի դարձերեսը

Նյութը՝ արծաթ (ոսկեզօծ 999 հարգի)

Տրամագիծը՝ 25 մմ

Որակը՝ պրուֆ

Հարգը՝ 925

Քաշը՝ 6 գր

Հավելված 3

ՀՀ կրթության և գիտության նախարարության
գիտության կոմիտեի նախագահի
2016 թ. հունիսի 24-ի N 29-Ա հրամանի

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության կոմիտեի Ոսկե մեդալի վկայականի ձևը

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

ՈՍԿԵ ՄԵԴԱԼԻ ՎԿԱՅԱԿԱՆ

Շնորհվում է

պաշտոնը, գիտական աստիճանը, կոչումը

Անուն Հայրանուն Ազգանուն-ին

..... համար/կապակցությամբ

ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ՝ (ստորագրություն) ԱՆՈՒՆ ԱԶԳԱՆՈՒՆ

Վկայական N ...
Կոմիտեի նախագահի ..... թ., N ..... հրաման

Հավելված 4

ՀՀ կրթության և գիտության նախարարության
գիտության կոմիտեի նախագահի
2016 թ. հունիսի 24-ի N 29-Ա հրամանի

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության կոմիտեի պատվոգրի ձևը

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

ՊԱՏՎՈԳԻՐ

Շնորհվում է

(պաշտոնը, գիտական աստիճանը, կոչումը)

Անուն Հայրանուն Ազգանուն

..... համար/կապակցությամբ

ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ՝ *(ստորագրություն)* ԱՆՈՒՆ ԱԶԳԱՆՈՒՆ

Վկայական N ...
Կոմիտեի նախագահի ..... թ., N ..... հրաման

Հավելված 5

ՀՀ կրթության և գիտության նախարարության
գիտության պետական կոմիտեի նախագահի
2016 թ. հունիսի 24-ի N 29-Ա հրամանի

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության կոմիտեի շնորհակալագրի ձևը

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

ՇՆՈՐՀԱԿԱԼԱԳԻՐ

Շնորհվում է

(պաշտոնը, գիտական աստիճանը, կոչումը)

Անուն Հայրանուն Ազգանուն

..... համար/կապակցությամբ

ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ՝ *(ստորագրություն)* ԱՆՈՒՆ ԱԶԳԱՆՈՒՆ

Վկայական N ...
Կոմիտեի նախագահի ..... թ., N ..... հրաման